ԱՊՐԻ
ԿԻՐԱՌԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ԱՐՄԵՆԻԱ

HEINRICH BÖLL STIFTUNG
ԵՐԵՎԱՆ
Հարավային Կովկասի տարածաշրջան

ԵՄ-Հայաստան հարաբերությունների ամրապնդում

Ռազմավարական համագործակցության ճանապարհին

2024թ. հունվար

Բովանդակություն

Ներածություն	**3**
Նախապատմություն	**5**
Ինստիտուցիոնալ շրջանակների խճանկար	**8**
Աջակցելով Հայաստանում ընթացող բարեփոխումներին. լծակների կիրառում կայուն առաջընթացի համար	**13**
Հայաստանի անվտանգության սպառնալիքի դիմակայում. լծակների կիրառում՝ ընդդեմ Ադրբեջանի	**15**
ԵՄ-Հայաստան հարաբերությունները ձևավորող տարածաշրջանային դինամիկայի վերաբերյալ պատկերացում	**17**
ԵՄ-ին և Հայաստանին անհրաժեշտ է ռազմավարական տեսլական	**21**
Առաջարկներ	**25**

Հրապարակման բովանդակության պատասխանատվությունը կրում է բացառապես ԱՊՐԻ Արմենիան և այն որևէ կերպ չի կարող արտահայտել Հայնրիխ Բյոլ հիմնադրամի երևանյան գրասենյակի (Հարավային Կովկասի տարածաշրջան) տեսակետները:

Ներածություն

2023 թվականի հոկտեմբերի 26-ի և 27-ի Եվրոպական խորհրդի նիստում Եվրոպական միության (ԵՄ) 27 անդամ երկրների և կառավարությունների ղեկավարները հրավիրեցին ԵՄ արտաքին գործերի և անվտանգություն քաղաքականության հարցերով Բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելին և Եվրահանձնաժողովին (ԵՀ)՝ ներկայացնելու «ԵՄ-Հայաստան հարաբերությունների ամրապնդման» տարբերակներ[1]: Հայաստանի կառավարությունն իր հերթին վերահաստատեց ԵՄ հետ երկկողմ հարաբերությունների զարգացմանն իր հավատարմությունը՝ համապատասխան «հայ ժողովրդի եվրոպական նկրտումներին»: Հոկտեմբերին Եվրախորհրդարանում ունեցած ելույթում վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց ԵՄ հետ ավելի սերտ գործընկերություն հաստատելու (այնքանով, որքանով ԵՄ-ն կհամարի հնարավոր) Հայաստանի պատրաստակամության մասին[2]: Արտաքին գործողությունների եվրոպական ծառայության (EEAS), Եվրոպական հանձնաժողովի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի և Frontex-ի (Արտաքին սահմաններում համագործակցության օպերատիվ կառավարման եվրոպական գործակալություն) ներկայացուցիչներից կազմված փաստահավաք առաքելությունը նոյեմբերին հանդիպեց Հայաստանի պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ «համագործակցության հետագա ամրապնդման և բարեփոխումների իրականացման նպատակով, այդ թվում՝ էներգետիկայի, տրանսպորտի, թվային տեխնոլոգիաների, հետազոտությունների և նորարարությունների ոլորտներում, ի թիվս այլնի, նաև ներդրումների միջոցով»[3]: Արդեն իսկ գոյություն ունեցող բազմաբևեռ հարաբերությունների շրջանակներում երկկողմ համագործակցությունն ընդլայնելու ձգտումը փոխադարձ է ու թեև վերջին իրադարձությունները զարգացել են արագ տեմպերով, ապագայի հստակ ուղին և ԵՄ-Հայաստան հետագա հարաբերությունների տեսլականը դեռևս պետք է հասկանալ:

[1] Եվրոպական խորհուրդ, «Եվրոպական խորհրդի հանդիպում (2023թ. հոկտեմբերի 26, 27) - եզրակացություններ», Եվրոպայի կոնսիլիում (Եվրոպական խորհուրդ, 2023թ. հոկտեմբերի 27) https://www.consilium.europa.eu/media/67627/20241027-european-council-conclusions.pdf

[2] Նիկոլ Փաշինյան, «Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը Եվրոպական խորհրդարանում» (Եվրոպական խորհրդարան, 2023թ. հոկտեմբերի 17), https://www.primeminister.am/en/statements-and-messages/item/2023/10/17/Nikol-Pashinyan-Speech/%20Pashinyan/VdL%20statement%20https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/statement_23_4789

[3] Արտաքին գործողությունների եվրոպական ծառայություն, «ԵՄ-ն և Հայաստանը դիտարկում են իրենց գործընկերությունն ամրապնդելու և խորացնելու հնարավորությունը», www.eeas.europa.eu (Եվրոպական միության պատվիրակությունը Հայաստանում, 2023թ. նոյեմբերի 29), https://www.eeas.europa.eu/delegations/armenia/eu-and-armenia-look-strengthening-and-deepening-their-partnership_en?s=216

Զեկույցի մասին

Սույն զեկույցում, որը հիմնված է վեց շաբաթների ընթացքում Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանյան գրասենյակի հետ համագործակցությամբ ԱՊՐԻ Արմենիայի կողմից իրականացված հետազոտության վրա, դիտարկվում են Եվրոպական միության և Հայաստանի հարաբերությունների ընթացիկ և զարգացող գործոնները: Երկու կողմերի մտահոգություններն ու ակնկալիքներն արտացոլելու նպատակով մենք իրականացրել ենք մի շարք հարցազրույցներ: Դրանք եղել են ինչպես օնլայն, այնպես էլ առերես հանդիպումներ Հայաստանի պաշտոնյաների, Եվրոպական միության ներկայացուցիչների, Երևանում գտնվող ԵՄ անդամ պետությունների դիվանագետների, ինչպես նաև Երևանում և Բրյուսելում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների անդամների հետ: Ընդհանուր առմամբ 14 հարցազրույցներն իրականացվել են 2023 թվականի նոյեմբերի 13-ից դեկտեմբերի 4-ն ընկած ժամանակահատվածում:

Զեկույցը սկսում է ԵՄ և Հայաստանի միջև նախկին և ընթացիկ համաձայնագրերի վերաբերյալ ակնարկով: Այնուհետ, դիտարկվում են Հայաստանի հետ ԵՄ համագործակցության շրջանակները, մասնավորապես՝ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (CEPA) և Արևելյան գործընկերությունը (ԱԼԳ): Ապա զեկույցում անդրադարձ է կատարվում փոխհարաբերությունների որոշ մարտահրավերներին, ներառյալ՝

- Հայաստանում ներքին բարեփոխումների գործընթաց,
- Ադրբեջանական ագրեսիան զսպելու համար առավել վճռական միջոցառումներ իրականացնելու ԵՄ դժկամություն,
- Հարավային Կովկասում ուժերի դասավորություն, որն ազդում է ԵՄ-Հայաստան հարաբերությունների վրա,
- թե՛ ԵՄ-ի և թե՛ Հայաստանի կողմից հետևողական արտաքին քաղաքականության տեսլականի պակաս:

Ի լրումն Հայաստանի և Եվրոպական միության ակնկալիքների ուրվագծման և վերջիններիս գործընկերության հետագա զարգացման ներուժի ուսումնասիրման՝ զեկույցը ներառում է ԵՄ-Հայաստան հարաբերություններն ամրապնդելու վերաբերյալ երկու կողմերին ուղղված գործնական առաջարկներ:

Նախապատմություն

1996թ. ապրիլ	ԵՄ-ի և Հայաստանի միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագրի ստորագրմամբ
2009թ. մայիս	մեկնարկեց Արևելյան գործընկերությունը
2013թ. սեպտեմբեր	Ենթադրաբար Ռուսաստանի ճնշման ներքո Հայաստանը դուրս եկավ Ասոցացման համաձայնագրի բանակցություններից
2017թ. նոյեմբեր	ԵՄ-ն և Հայաստանը ստորագրեցին Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (CEPA)
2021թ. մարտ	CEPA-ն ամբողջությամբ ուժի մեջ մտավ՝ փոխարինելով 1996 թվականի Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագիրը
2021թ. նոյեմբեր	ԵՄ-ն և Հայաստանն ստորագրեցին Ընդհանուր ավիացիոն գոտու մասին համաձայնագիր
2021թ. դեկտեմբեր	Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը նախաձեռնեց Հայաստանի և Ադրբեջանի հանդիպումների առաջին փուլը
2022թ. հոկտեմբեր-դեկտեմբեր	ԵՄ-ն Հայաստանում տեղակայեց ժամանակավոր դիտորդական առաքելություն
2023թ. փետրվար	ԵՄ-ն Հայաստանում տեղակայեց երկամյա դիտորդական առաքելություն
2023թ. նոյեմբեր	ԵՄ-ն Հայաստան ուղարկեց փաստահավաք առաքելություն

Փաստեր և թվեր (դեկտեմբերի դրությամբ 2023 թ.)

- Ներկայումս Հայաստանում իրականացվում է ԵՄ կողմից ֆինանսավորվող 87 ծրագիր: Դրանց թվում են նախաձեռնություններ՝ ի աջակցություն անկախ ԶԼՄ-ներին, գենդերային հավասարությանը, երիտասարդության զբաղվածությանը, առողջապահության անվտանգությանը, դատական բարեփոխումներին, կլիմայի փոփոխության դեմ պայքարի միջոցառումներին և այլն[4]:

- ԵՄ-ն Հայաստանի երկրորդ խոշոր արտահանման շուկան է: 2022 թվականին այն կազմել է Հայաստանի առևտրի ընդհանուր ծավալի 16%-ը, ընդհանուր արտահանման 14%-ը, իսկ ԵՄ-ից Հայաստան ներմուծումների մասնաբաժինը եղել է 17%[5]:

- ԵՄ-ն Հայաստանից հիմնականում ներմուծում է արդյունաբերական արտադրանք, հումք, խմիչք և ծխախոտային արտադրանք, մինչդեռ Հայաստանը Եվրոպայից ներմուծում է մեքենաներ, տրանսպորտային սարքավորումներ, արդյունաբերական արտադրանք և քիմիական նյութեր[6]:

- Եվրոպական միության և Հայաստանի միջև առևտուրը ենթարկվել է տատանումների: Հայաստանից ԵՄ արտահանումը գագաթնակետին է հասել 2022 թվականին՝ 2014-2018 թվականներին ավելանալուց, ապա 2021 թվականին նվազելուց հետո: Միևնույն ժամանակ, ԵՄ-ից Հայաստան ներմուծումը ևս տատանվել է. 2014-2015 և 2015-2016 թվականներին այն նվազել է, որին հաջորդել է 2016-2017 թվականների աճը և նոր գագաթնակետի է հասել 2022 թվականին[7]:

---

[4] Եվրոպական միությունը՝ Հայաստանի համար, «Ծրագրեր – ԵՄ-ն՝ Հայաստանի համար», Եվրոպական միությունը՝ Հայաստանի համար, 2023թ. դեկտեմբերի 6-ի դրությամբ, https://eu4armenia.eu/projects/

[5] Եվրոպական հանձնաժողով, «ԵՄ առևտրային հարաբերությունները Հայաստանի հետ», Եվրոպական հանձնաժողովի առևտրի քաղաքականությունը (Եվրոպական հանձնաժողով), 2023թ. դեկտեմբերի 6-ի դրությամբ, https://policy.trade.ec.europa.eu/eu-trade-relationships-country-and-region/countries-and-regions/armenia_en#:~:text=Trade%20with%20the%20EU%20accounted

[6] Արտաքին գործողությունների եվրոպական ծառայություն, «Եվրոպական միությունը և Հայաստանը», www.eeas.europa.eu (Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն, 2021թ. հուլիսի 21), https://www.eeas.europa.eu/armenia/european-union-and-armenia_en

[7] Արժույթի միջազգային հիմնադրամ, «ԱՄՀ տվյալներ», data.imf.org, 2022թ., https://data.imf.org/regular.aspx?key=61013712

- Զարգացմանն ուղղված աջակցության շրջանակներում ԵՄ-ն 2023 թվականի հոկտեմբերին ստորագրեց ֆինանսական փաթեթ, որը նախատեսում է Եվրոպական ներդրումային բանկի (EIB) արտաքին գործունեության նոր մասնաճյուղի՝ EIB Global-ի միջոցով 10 միլիոն եվրո դրամաշնորհի հատկացում՝ Հայաստանում կրթական ոլորտի ենթակառուցվածքները բարելավելու նպատակով[8]:

- 2023 թվականի սեպտեմբերին ԵՄ-ն ավելի քան 12 միլիոն եվրո մարդասիրական օգնություն հատկացրեց՝ ի աջակցություն Լեռնային Ղարաբաղից տեղահանված հայերի: 2020 թվականի պատերազմից ի վեր ԵՄ մարդասիրական օգնությունը հասել է 32,9 մլն եվրոյի և ներառում է սնունդ, հիգիենայի և կենցաղային պարագաներ, ապաստան, ինչպես նաև առողջապահական և հոգեբանական աջակցություն[9]:

[8] Եվրոպական հանձնաժողով, «Global Gateway Forum. ԵՄ-ն հայտարարում է Հայաստանում կրթության հնարավորությունների աջակցությանն ավելի քան 10 միլիոն եվրո հատկացնելու մասին», neighbourhood-enlargement.ec.europa.eu (Եվրոպական հարևանության քաղաքականություն և ընդլայնման բանակցություններ (DG NEAR), 2023թ. հոկտեմբերի 25) https://neighbourhood-enlargement.ec.europa.eu/news/global-gateway-forum-eu-announces-over-eu10-million-support-education-opportunities-armenia-2023-10-25_en

[9] Եվրոպական հանձնաժողով, «Եվրոպական քաղաքացիական պաշտպանության և մարդասիրական օգնության գործողություններ. Հայաստան և Ադրբեջան», civil-protection-humanitarian-aid.ec.europa.eu, 2023թ., https://civil-protection-humanitarian-aid.ec.europa.eu/where/europe/armenia-and-azerbaijan_en

Ինստիտուցիոնալ շրջանակների խճանկար

ԵՄ-Հայաստան հարաբերությունների իրավական և քաղաքական հիմքը կառուցվում է Արևելյան գործընկերության և երկկողմ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (այսուհետ՝ CEPA կամ Համաձայնագիր) վրա: Համաձայն մեր հետազոտության՝ CEPA-ն լավ հիմք է հանդիսանում ՀՀ-ԵՄ հարաբերությունների ամրապնդման համար, մինչդեռ ԱլԳ-ն պետք է բարեփոխվի արդիական մնալու համար[10]:

Հայաստանի հետ Եվրոպական միության երկկողմ հարաբերությունների հիմք հանդիսանում է 2017 թվականին ստորագրված և 2021 թվականին ամբողջությամբ ուժի մեջ մտած CEPA-ն:
CEPA-ի հիմնասյուներն են.

- **Ավելի լավ կենսամակարդակ.** այն սահմանում է պայմաններ, որոնք ավելի լավ ներդրումների և շուկաների հասանելիության հնարավորություն են ապահովում: Երկկողմ առևտրի ազատականացումը ծառայությունների բազմաթիվ ոլորտներում, օրինակ՝ վարձակալության, խորհրդատվական, ճարտարագիտական, ֆինանսական և տրանսպորտային, նպաստում է Հայաստանի ներքին տնտեսական աճին և դիվերսիֆիկացմանը:
- **Ավելի արդար և անվտանգ հասարակություն.** այն Հայաստանին տրամադրում է օգնություն բարեփոխումներ իրականացնելու, ինչպես նաև կառավարման, օրենքի գերակայության, արդարադատության և մարդու իրավունքների համակարգերը ԵՄ չափանիշներին համապատասխանեցնելու հարցում:
- **Ավելի մաքուր շրջակա միջավայր.** օգնում է Հայաստանին զարգացնել վերականգնվող էներգիայի աղբյուրները, որոնք կարող են նվազեցնել կախվածությունն էներգիայի ներմուծումից և բարելավել էներգիայի հասանելիությունը: Արդյունքում, Հայաստանը պետք է տնտեսական աճի և շրջակա միջավայրի պաշտպանության հարցերում հասնի ԵՄ չափանիշներին:
- **Ավելի լավ կրթություն.** այն խթանում է ամբողջ կյանքի ընթացքում ուսումը, համագործակցությունը և թափանցիկությունը կրթության և վերապատրաստման բոլոր մակարդակներում:

[10] Եվրպական միություն, «Համապարփակ և ընդլայնված գործընկերության պայմանագիր», Eur-Lex Europa (Եվրոպական միության պաշտոնական ամսագիր, 2018թ. հունվարի 26), https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:22018A0126(01)

CEPA-ն մնում է ամուր հիմք ԵՄ-Հայաստան հարաբերությունների նոր փուլի համար:

Զրուցակիցներից ոմանք ԵՄ-Հայաստան հարաբերությունների ներկա վիճակն անվանել են «ընդլայնված գործընկերություն» կամ «ավելին, քան գործընկերություն»: Հայ զրուցակիցներից ոմանք CEPA-ն դիտարկում են որպես «Ասոցացման համաձայնագրի պարզեցված տեսակը», քանի որ այն ընդգրկում է ասոցացման համաձայնագրի բոլոր ասպեկտները, որը ԵՄ-ն և Հայաստանը նախատեսել էին ստորագրել 2013 թվականին՝ բացառությամբ առևտրի[11]: Հանդես գալով որպես ռազմավարական գործիք՝ CEPA-ն Հայաստանի տարբեր հաստատություններ համապատասխանեցնում է ԵՄ չափանիշներին և նպաստում է ժողովրդավարացմանը՝ միևնույն ժամանակ չոտնահարելով Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) առջև Հայաստանի ունեցած պարտավորությունները:

Հարցազրույցների մասնակիցներն ընդգծել են, որ CEPA-ն ինստիտուցիոնալացնում է ԵՄ-Հայաստան հարաբերությունները՝ սահմանելով հստակ նպատակներ համագործակցության տարբեր ոլորտներում և ստեղծելով ԵՄ-Հայաստան համատեղ մարմիններ, ինչպիսիք են Գործընկերության խորհուրդը և Գործընկերության կոմիտեն: Ավելին, որոշ զրուցակիցներ ընդգծել են, որ Համաձայնագիրը ոչ միայն խթանում է ԵՄ-Հայաստան հարաբերությունները, այլև երկկողմ հարաբերությունները Հայաստանի և առանձին անդամ պետությունների կառավարությունների միջև: CEPA-ի ևս մեկ առանցքային առավելություն հանդիսանում է իր՝ Հայաստանում բարեփոխումների կատալիզատորի դերը, որը նպաստում է Հայաստանում ժողովրդավարության, ենթակառուցվածքների և հաղորդակցության ոլորտներում առաջընթացին:

Ընդհանուր առմամբ, CEPA-ն ընդգրկում է համագործակցության տարբեր ոլորտներ, սակայն համապարփակ առևտրի պայմանագրի բացակայության պայմաններում այն նաև արտացոլում է Հայաստանի արտաքին և տնտեսական քաղաքականության բարդ պարամետրերը: Տնտեսական բարեփոխումներն առանձնացվել են որպես բարելավման առանցքային ոլորտներից մեկը: Ավելին, չնայած Համաձայնագրի հավակնոտ շրջանակին՝ դեռևս էական քայլերի անհրաժեշտություն կա, մինչ դրանում նշված բարեփոխումները հնարավոր լինի կյանքի կոչել: EEAS-ի և ԵՀ-ի կողմից նոյեմբերի 2023 թ. իրականացված փաստահավաք առաքելությունը բացահայտեց բարեփոխումների շարունակական անհրաժեշտությունը, այդ թվում՝ այն ոլորտներում, որոնց արդեն իսկ անդրադարձել է CEPA-ն, օրինակ՝ արդարադատությունը և քաղաքականությունը[12]: Դա կարելի է դիտարկել որպես

[11] Ենթադրաբար ի պատասխան Հայաստանի և ԵՄ միջև պոտենցիալ Ասոցացման համաձայնագրի վերաբերյալ Կրեմլի անհանգստությանը՝ այն ժամանակ գործող նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարեց փոխարենը Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու Հայաստանի որոշման մասին:

[12] Արտաքին գործողությունների եվրոպական ծառայություն, «ԵՄ-ն և Հայաստանը ձգտում են ամրապնդել և խորացնել գործընկերությունը», www.eeas.europa.eu (Հայաստանում Եվրոպական միության

Համաձայնագրի ոչ լիարժեք իրականացման հետևանք: Զրուցակիցները խոստովանել են, որ իրականացման գործընթացը դեռևս ավարտված չէ, և ընդգծել են, որ այնպիսի չափանիշների կիրառումը, ինչպիսիք են CEPA-ին համապատասխան օրինակ ճանապարհային երթևեկության անվտանգությունը և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը շարունակում են կարևոր նշանակություն ունենալ Համաձայնագրի ողջ ներուժի իրացման համար: Այս կարողությունների զարգացումը պահանջում է ինչպես ժամանակ, այնպես էլ հետագա ֆինանսական ներդրումներ:

Արևելյան գործընկերությունը բարեփոխման կարիք ունի:

2009 թվականին ԵՄ-ն իր Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում մեկնարկեց Արևելյան գործընկերությունը՝ նոր թափ հաղորդելու իր արևելյան քաղաքականությանը՝ բազմակողմ ուղղություններով ամրապնդելով համագործակցությունն Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի գործընկերների հետ (Բելառուս, Ուկրաինա, Մոլդովա, Վրաստան, Հայաստան, Ադրբեջան): Ի սկզբանե, Արևելյան գործընկերությունը նպատակ ուներ համապատասխան երկրներում բարելավել տնտեսությունը, կառավարումը, փոխկապակցվածությունը և սոցիալական ասպեկտները:

Այնուամենայնիվ, Բելառուսի՝ ԱլԳ-ից դուրս գալուց, Ուկրաինայի պատերազմից և 2020 թվականի Լեռնային Ղարաբաղի պատերազմից հետո հարցազրույցների մասնակիցներից շատերն Արևելյան գործընկերության բարեփոխման անհրաժեշտություն են տեսնում: Մինչդեռ CEPA-ն հաշվի է առնում Հայաստանի եզակի և մարտահրավերները և հնարավորությունները, զրուցակիցներից ոմանք նշել են, որ Արևելյան գործընկերությունը միավորում է Հայաստանն այն երկրների հետ, որոնք ունեն չափազանց տարբեր քաղաքական ռեժիմներ, սոցիալական կառուցվածքներ, կախվածություններ, ինչպես նաև տարածաշրջանային դաշինքներ կամ հակամարտություններ: ԱլԳ մեկնարկային փուլում վեց գործընկեր պետությունների և ԵՄ երկկողմ հարաբերություններն արդեն տարբերվում էին: Հետագա զարգացումներն ավելի մեծ տարաձայնությունների հանգեցրին՝ հարցականի տակ դնելով Արևելյան գործընկերության՝ որպես ինստիտուցիոնալ շրջանակի համագործակցություն այդ երկրների հետ:

Ներկայիս ԱլԳ շրջանակներում ԵՄ հետ գործընկեր պետությունների հարաբերությունների տարբեր դինամիկան հանգեցրել է հարաբերությունների տարբեր հիմքերի առանց ընդհանուր բազայի.

- **Ուկրաինան, Մոլդովան**, իսկ այժմ նաև **Վրաստանն** ունեն ԵՄ թեկնածուի կարգավիճակ,
- **Բելառուսը** դուրս է եկել ԱլԳ-ից,
- **Հայաստանն** ստորագրել է CEPA-ն,

պատվիրակություն, 2023թ. նոյեմբերի 29), https://www.eeas.europa.eu/delegations/armenia/eu-and-armenia-look-strengthening-and-deepening-their-partnership_en?s=216

- **Ադրբեջանի** հետ հարաբերությունները գերազանցապես հիմնված են էներգետիկ ոլորտի և 1996 թվական երկկողմ համաձայնագրի վրա:

ԱլԳ-ի՝ որպես իր Արևելյան բլոկի հետ ԵՄ ներգրավվածությանն աջակցելու արդյունավետ հարթակի պահպանումն ու վերանախագծումն ունեն մեծ առավելություններ: Հարցազրույցների մասնակիցներից մի քանիսն ընդգծել են Հայաստանի անսասան հավատարմությունն ԱլԳ-ին և շեշտել դրա արժեքը՝ որպես արդյունավետ աջակցության և համագործակցության եզակի հարթակ ոչ միայն ԵՄ, այլև գործընկեր երկրների միջև, ինչը մինչ այժմ եղել է սահմանափակ: Արևելյան գործընկերության սահմանափակումները հաղթահարելու և դրա շարունակականությունն ապահովելու համար անհրաժեշտ է օգտագործել վերջինիս ունեցած գործիքներն Արևելյան գործընկերության համատեքստում ԵՄ ռազմավարական տեսլականը ձևակերպելու համար: Առանց դրա բարեփոխման Արևելյան գործընկերության կարևորությունն էլ ավելի կնվազի կամ կփոխարինվի մեկ այլ կառույցով:

Արևելյան գործընկերությանն աջակցելու հարցում կոլեկտիվ շահագրգռվածությունն ընդգծվեց վերջերս տեղի ունեցած ԱլԳ արտաքին գործերի նախարարների հանդիպմանը, որտեղ և՛ ԵՄ անդամ պետությունների ԱԳ նախարարները, և՛ գործընկեր երկրների ներկայացուցիչները ընդհանուր հավատարմություն հայտնեցին Արևելյան գործընկերության օրակարգը բարելավելու հարցում՝ հաղթահարելու վերջին շրջանի անհաջողությունները[13]: Մի կողմից, Արևելյան գործընկերությունն ունի համապատասխան գործիքներ, որոնք կարող են խթանել գործընկեր երկրների տնտեսությունը, օրինակ՝ Տնտեսական և ներդրումային ծրագիրը: Մյուս կողմից, դա կարող է շարժիչ հանդիսանալ, որպեսզի ԵՄ-ն առավել ակտիվ աշխարհաքաղաքական դեր ստանձնի. նպատակ, որը Եվրոպական միությունը հետապնդում է 2019 թվականից և հատկապես Ռուսաստանի՝ Ուկրաինա ներխուժումից հետո: ԵՄ աշխարհատնտեսական ազդեցության 2023 թվականի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Չինաստանի և Ռուսաստանի աշխարհատնտեսական ազդեցությունը մեծանում է[14]: Թեպետ ԵՄ-ն շարունակում է կարևոր աշխարհատնտեսական դերակատար մնալ Արևմտյան Բալկաններում, Թուրքիայում և Արևելյան ու Հարավային հարևանության որոշ երկրներում, Ռուսաստանն ու Չինաստանն ավելի ու ավելի ակտիվ են օգտագործում ենթակառուցվածքային և տեխնոլոգիական նախաձեռնությունները Եվրոպայի արևելյան հարևանների, այդ թվում՝ ԱլԳ որոշ երկրների հետ հետագա համագործակցության նպատակով: Այս ֆոնին, ԱլԳ ձևաչափը ոչ միայն արժեքավոր է անդամ պետությունների և

[13] Արտաքին գործողությունների եվրոպական ծառայություն, «Արևելյան գործընկերության արտաքին գործերի նախարարների հանդիպում, 2023թ. դեկտեմբերի 11» www.eeas.europa.eu (Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն, 2023թ. դեկտեմբերի 13), https://www.eeas.europa.eu/delegations/armenia/eastern-partnership-foreign-affairs-ministerial-meeting-11-december-2023_en?s=216.

[14] Վասիլի Աստրով և այլք, «Պահելով ընկերներին ավելի մոտ. ինչո՞ւ ԵՄ-ն պետք է հաշվի առնի նոր աշխարհաքաղաքական իրողությունները և վերադարձնի իր հարևաններին (հրապարակում)», Wiiw.ac.at (Վիեննայի միջազգային տնտեսական հետազոտությունների ինստիտուտ և Բերթելսման հիմնադրամ, 2023թ. փետրվար), https://wiiw.ac.at/p-6487.html.

գործընկեր երկրների միջև տնտեսական և քաղաքական համագործակցությունը խթանելու տեսանկյունից, այլև կարող է ծառայել որպես ռազմավարական գործիք՝ բարձրացնելու ԵՄ բազմաչափ փոխգործակցությունն իր Արևելյան հարևանության հետ: ԱլԳ վերջին հանդիպումը հանգեց այն եզրակացության, որ համագործակցության առանցքային ոլորտները պետք է կենտրոնանան քաղաքացիական բարեփոխումների, փոխկապակցվածության և տրանսպորտի վրա: Այս խնդիրների լուծումը, հիմնված ընդհանուր շահերի և ԵՄ հիմնարար արժեքների առաջմղման վրա, կարող է նպաստել տարածաշրջանային խաղաղության հաստատմանը: Առաջարկներ են արվել այլ տարածաշրջանների հետ, ինչպիսիք են Արևմտյան Բալկանները և Կենտրոնական Ասիան, ԱլԳ փոխգործակցությունն ակտիվացնելու վերաբերյալ՝ ԵՄ փոխկապակցվածության հաստատման օրակարգին համապատասխան: Այս մոտեցումն ուղղված է կառույցի ներուժի օգտագործմանը՝ ուսումնասիրելու Կենտրոնասիական, Միջինասիական և Տրանսկասպիական միջանցքների հետ սիներգիա: Մասնավորապես, քանի որ տարածաշրջանային փոխկապակցվածությունը գնալով ավելի մեծ կարևորություն է ստանում, զրուցակիցներն ընդգծել են Սևծովյան մալուխի նախագծում Հայաստանի ներգրավման տնտեսական և քաղաքական նշանակությունը:

Առաջարկներ

- Եվրոպական միությունը պետք է բարեփոխի Արևելյան գործընկերությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով քաղաքացիական բարեփոխումներին, ներտարածաշրջանային փոխկապակցվածությանը և տրանսպորտին՝ բարձրացնելու կենսամակարդակը գործընկեր երկրներում և փոխկապակցվածության միջոցով նպաստելու խաղաղությանը:

- Եվրոպական միությունը պետք է ակտիվորեն աջակցի տարածաշրջանային փոխկապակցվածության նախագծերին, այդ թվում՝ աջակցի Սևծովյան էներգետիկ մալուխի նախագծին Հայաստանի մասնակցության ապահովմանը՝ օգնելու Հայաստանին դուրս գալ շրջափակումից:

- Եվրոպական միությունը պետք է շարունակի CEPA-ի շրջանակներում աջակցել Հայաստանի տնտեսական բարեփոխումներին, հատկապես ԵՄ շուկայական չափանիշներին հասնելու համատեքստում:

- Հայաստանը պետք է բարձրացնի իր շուկայի մրցունակությունը և կառուցողական աջակցություն ցուցաբերի հայկական բիզնեսին ԵՄ շուկայի չափանիշներին համապատասխանելու նպատակով՝ անհրաժեշտ տեղեկատվությունը դարձնելով առավել հասանելի, հայկական արտադրանքի չափանիշները համապատասխանեցնելով ԵՄ նորմերին, ինչպես նաև ԵՄ որակի չափանիշներին համապատասխան նախաձեռնությունների մշակման և կյանքի կոչման հարցում ձևավորելով համագործակցություն կառավարության և մասնավոր հատվածի միջև:

Աջակցելով Հայաստանում ընթացող բարեփոխումներին. լծակների կիրառում կայուն առաջընթացի համար

Եվրոպական միությունը վճռական դեր խաղաց Հայաստանի զարգացմանը նպաստելու հարցում էական ֆինանսական օգնության և տարատեսակ նախագծերին աջակցելու միջոցով, հատկապես կանաչ էներգիայի, կայուն զարգացման և կրթության ոլորտներում (տես էջեր 6-7, «Փաստեր և թվեր»): Այդ ներդրումներն օգուտ են տվել հայ հասարակության տարբեր շերտերին, այդ թվում՝ ֆերմերներին, ուսանողներին և կին ձեռներեցներին: **Սակայն, դեռևս կան մարտահրավերներ՝ կապված ներքին բարեփոխումների արդյունավետ իրականացման հետ, հատկապես կառավարման, օրենքի գերակայության և դատական համակարգի ոլորտներում:**

Չնայած շարունակվող ջանքերին՝ Հայաստանի քաղաքականությունը և բյուրոկրատական ապարատը մնում են թերի: Հարցազրույցների ընթացքում ակնհայտ է դարձել համապատասխան քաղաքական կառույցների և լավ գործող պետական ինստիտուտների պակասը, ինչը կասկածի տակ է դնում, որ երկիրն ի վիճակի է կյանքի կոչել CEPA-ն: Հայաստանը դեռևս փորձում է ձերբազատվել կոռուպցիայի և խորհրդային բյուրոկրատիայի մնացորդներից: Ավելի ամուր քաղաքական շրջանակի և գործընթացների բացակայությունը լուրջ խոչընդոտ է հանդիսանում քաղաքացիական հասարակության զարգացման ճանապարհին: Այդ նպատակին հասնելու համար Հայաստանը պետք է հստակ բարեփոխումներ իրականացնի, որոնք կարող են օգնել ամրապնդել պետական կառավարումը:

Անվտանգությունը շարունակում է մնալ գլխավոր առաջնահերթությունը և հաճախ ստվերում է ներքին բարեփոխումների վրա կենտրոնանալու անհրաժեշտությունը: Ուստի, Հայաստանի կառավարությունը պետք է թափանցիկություն ապահովի համապատասխան պետական մարմինների հստակ պարտավորությունների և պարտականությունների բարեփոխումներ իրականացնելիս, այդ թվում՝ CEPA-ում շարադրվածների: Այդ նպատակով անհրաժեշտ է երաշխավորել, որ Համաձայնագրի իրականացումը համապատասխանում է Կառավարության համապատասխան մարմինների մշտական քաղաքական օրակարգին, օրինակ՝ CEPA-ում ամրագրված քաղաքացիական ոլորտում բարեփոխումները Հայաստանի պետական կառավարման ընթացիկ բարեփոխման մեջ ինտեգրելու միջոցով: Այս մարտահրավերները հաղթահարելու համար ԵՄ-ի և Հայաստանի կողմից անհրաժեշտ են կայուն ջանքեր և միասնական հանձնառություն: Ի լրումն պետական ապարատի կարողությունների զարգացման նախաձեռնություններին՝ զրուցակիցները առաջարկել են, որ ԵՄ քաղաքացիական հասարակության անդամների հետ փոխադարձ կրթական նախագծերի միջոցով Հայաստանի քաղաքացիական հասարակությանը ցուցաբերված աջակցությունը կարող է ստեղծել հանրություն, որն արդյունավետ կերպով վերահսկում է կառավարության գործունեությունը՝ այդպիսով պետական մարմինները դարձնելով առավել

հաշվետու: Անկախ քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը համապատասխանում է «հայ ժողովրդի եվրոպական նկրտումներին» և կարող է օգնել ամուր հիմք ապահովել ԵՄ-Հայաստան հարաբերությունների համար:

Եվրոպական միությունը կարող է ապահովել Հայաստանի հավատարմությունը CEPA-ում ամրագրված բարեփոխումների ծրագրին առավել վճռական գործողությունների միջոցով, այդ թվում ներքին «լծակների» կիրառման միջոցով: Հարցարզրույցների մասնակիցներից ոմանք Վրաստանի փորձը ԵՄ հետ հարաբերություններում մատնանշել են որպես կարևոր օրինակ թե՛ ԵՄ-ի, թե՛ Հայաստանի համար:

Թեպետ Վրաստանն այժմ ձգտում է դառնալ ԵՄ անդամ, ժողովրդավարական հետընթացի համար մեղադրանքների պատճառով այն արձանագրել է որոշակի անհաջողություններ: Դրա օրինակ է հանդիսանում քաղաքական դաշտի բևեռացման մասին ԵՄ համաձայնագրից «Վրացական երազանք»-ի կառավարության դուրս գալը և վերջին հակաարևմտյան հայտարարությունները: Հաշվի առնելով այս նախադեպը՝ որոշ զրուցակիցներ ենթադրել են, որ ԵՄ-ն պետք է առավել բարձր չափանիշներ սահմանի Հայաստանի կառավարության համար և մեծացնի քաղաքացիական բարեփոխումների ակնկալիքներն ինչպես ներքին քաղաքականությունում, այնպես էլ ԵՄ հետ երկկողմ հարաբերություններում: Եվրոպական միությունը պետք է հետամուտ լինի այս տարրերի իրականացման հարցում և ապահովի բարեփոխումների գործընթացի շարունակականությունը Հայաստանի գործող ղեկավարության հետագա փոփոխությունների դեպքում ևս: Անսասան հավատարմությունը բարեփոխումների օրակարգին վճռական նշանակություն ունի ԵՄ-Հայաստանը կայուն համագործակցության ապահովման տեսանկյունից:

Առաջարկներ

- Եվրոպական միությունը պետք է տեխնիկական օգնության և կարողությունների զարգացման միջոցով աջակցի Հայաստանին CEPA-ում ամրագրված քաղաքացիական բարեփոխումների իրականացման հարցում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կառավարումը, օրենքի գերակայությունը և դատական համակարգը:

- Հայաստանը պետք է պարտավորվի արդյունավետ կերպով կյանքի կոչել բարեփոխումների օրակարգը համապատասխան պետական մարմինների կողմից իրականացման առավել հստակ պատասխանատվության և CEPA-ի շրջանակներում պետական կառավարման ընթացիկ բարեփոխումներին համապատասխան քաղաքացիական բարեփոխումների ավելի լավ ինտեգրման միջոցով:

- Հայաստանը պետք է ընդլայնի իր փոխգործակցությունը տեղի քաղաքացիական հասարակության և հանրության հետ՝ ապահովելու այդ բարեփոխումների կայուն հաջողությունը:

Հայաստանի անվտանգության սպառնալիքի դիմակայում. լծակների կիրառում՝ ընդդեմ Ադրբեջանի

Թեպետ ԵՄ-Հայաստան հարաբերությունների հիմքերի, մասնավորապես CEPA-ի վերաբերյալ ընկալումն ընդհանուր առմամբ դրական է, զրուցակիցները նշել են, որ Համաձայնագիրը, ինչպես նաև վերջին շրջանի մի շարք միջոցառումներ և հայտարարություններ **չեն լուծում Հայաստանի առաջնային մտահոգությունը, ավելի հստակ՝ չկա շոշափելի աջակցություն Հայաստանի անվտանգությունն ու տարածքային ամբողջականությունն ապահովելու համար:** Չնայած ԵՄ-ն գործիքներ է տրամադրում միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում Հայաստանի ժողովրդավարության և սահմանների անվտանգության ամրապնդման համար՝ Ադրբեջանի կողմից նոր ռազմական հարձակման անմիջական վտանգ կա, ինչը կարճաժամկետ հեռանկարում կհանգեցնի Հայաստանի ինքնիշխանության և տարածքների հնարավոր կորստի[15]:

Հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման գործընթացում Եվրոպական միությունը պատմականորեն երկրորդական դեր է խաղացել: Այնուամենայնիվ, 2021 թվականից տեղի է ունեցել նկատելի տեղաշարժ. ԵՄ-ն ցանկություն է հայտնել առավել ակտիվ ներգրավվածություն ունենալ, հատկապես բանակցություններում: Աճող հետաքրքրությունն ավելի է ընդգծվում ԵՄ-Հայաստան հարաբերությունների վերջին ասպեկտով, որը կենտրոնանում է անվտանգության վրա: Սրա արտացոլումն են այնպիսի նախաձեռնությունները, ինչպիսիք են 2022 թվականի հոկտեմբերին Եվրոպական միության կողմից Հայաստան դիտորդական առաքելություն ուղարկելը և 2023 թվականի փետրվարին Հայաստանում ԵՄ քաղաքացիական առաքելություն ծավալելը: Չնայած այս ջանքերին՝ Ադրբեջանի հանդեպ ԵՄ դիրքորոշումը՝ հարաբերություններում անվտանգության հավելյալ ասպեկտի արմատական պատճառը, մնում է չլուծված (տե՛ս հաջորդ բաժինը): Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղ ռազմական ներխուժմանը և հայ բնակչության բռնի տեղահանմանը ԵՄ-ի արձագանքը դրսևորվեց ԵՄ տարբեր բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարություններով և Հայաստանի կայունացմանն ու ԵՄ-Հայաստան հարաբերությունների հետագա ամրապնդմանն ուղղված մի շարք միջոցառումներով: Տվյալ փուլում այդ միջոցառումները ներառում են մարդասիրական օգնություն Լեռնային Ղարաբաղի հայերին, աջակցություն բարեփոխումների իրականացմանը, այդ թվում՝

[15] Քեթրին Բանախ և այլք, «ԵՄ-ն պետք է Հայաստանին եվրոպական հեռանկար տա», F.A.Z. (Ֆրանկֆուրտեր Ալգեմայնե, 2023թ. հոկտեմբերի 9), https://zeitung.faz.net/faz/politik/2023-10-09/b0a98692e0349748745bab3fc509ca50/?GEPC=s9

էներգետիկայի, տրանսպորտի, թվային տեխնոլոգիաների, հետազոտությունների և նորարարությունների ոլորտներում, ի թիվս այլնի՝ նաև ռազմավարական ոլորտներում ներդրումային պարտավորությունների, վիզայի ռեժիմի ազատականացման հնարավոր մեկնարկի մասին երկխոսության, «Եվրոպական խաղաղության գործիքի» միջոցով Հայաստանին ոչ մահաբեր սպառազինությունների տրամադրման աջակցության և Հայաստանում ԵՄ առաքելության անձնակազմի ընդլայնման միջոցով: Թեև վերոնշյալ միջոցառումները ողջունելի են, և դրանցից շատերը համապատասխանում են CEPA-ի դրույթներին՝ դրանք, նախևառաջ, կենտրոնացած են աջակցության և խթանների վրա, որոնց հնարավոր օգուտները կզգացվեն միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում: Սակայն, կարևոր է նշել, որ Հայաստանի հետ ԵՄ երկխոսության ակտիվացման արմատական պատճառները, ավելի հստակ՝ Հայաստանի անվտանգությանն ու կայունությանն սպառնացող վտանգները, որոնք բխում են Ադրբեջանի ագրեսիվ վարքագծից և Բրյուսելյան ձևաչափում նախկինում արված հայտարարությունների հանդեպ անհարգալից վերաբերմունքից՝ բացարձակ չեն վերացվել:

Եվրոպական միությունը պետք է պատրաստ լինի անհապաղ և վճռական քայլերի, եթե Ադրբեջանը հերթական անգամ խախտի Հայաստանի տարածքային ամբողջականությունը:

Հարցազրույցների մասնակիցները, այդ թվում՝ որոշ եվրոպացի շահագրգիռ կողմեր, ընդունել են, որ անհրաժեշտ է, որ ԵՄ-ն պատրաստ լինի խիստ միջոցառումներ ձեռնարկել Ադրբեջանի նկատմամբ, որոնք կարող են հետևանքներ ունենալ վերջինիս վերնախավի համար, եթե Բաքուն շարունակի իր ագրեսիվ հռետորաբանությունը և Հայաստանի վրա մշտական հարձակումները: Ադրբեջանի վրա ճնշում գործադրելու հարցում ԵՄ-ի կամ, ավելի ճիշտ, որոշ անդամ պետությունների ընդդիմանալը, ինչը պայմանավորված է էներգետիկ անվտանգության հարցում Ադրբեջանի կարևոր դերով, խոչընդոտում է առավել վճռական միասնական մոտեցում ունենալուն՝ այդպիսով խաթարելով ԵՄ քաղաքական օրակարգը[16]: Քանի որ Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի հարցում իր քաղաքական նպատակներին հասնելուց հետո կարծես թե չի ցանկանում շարունակել համագործակցել Բրյուսելյան ձևաչափով, զրուցակիցներից ոմանք ենթադրել են, որ Եվրամիությունը պետք է օգտագործի Ադրբեջանի հետ իր էներգետիկ գործընկերությունը բանակցություններին վերադառնալու համար: Չնայած ադրբեջանական գազից ԵՄ կախվածությանը՝ տնտեսական կախվածության հավասարակշռությունը պետք է լինի ի օգուտ ԵՄ-ի, քանի որ Ադրբեջանը հույս է դնում Եվրոպական միության վրա՝ որպես իր գազի գնորդի: Պայմաններ սահմանելով իր ապագա հարաբերություններում ԵՄ-ն կկարողանա արդյունավետ օգտագործել իր ազդեցությունը՝ Ադրբեջանին դրդելով նախապատվությունը տալ երկխոսությանը, այլ ոչ թե բարձր քաղաքական և տնտեսական գին ունեցող

[16] Ռիկարդ Ջոզվիակ (@RikardJozwiak), «Սա պետք է լիներ ԵՄ-27-ի հայտարարությունը, սակայն արգելափակեց այն» #Հայաստան #Ադրբեջան #Լեռնային_Ղարաբաղ, Թվիթեր, 2023թ. սեպտեմբերի 21, https://twitter.com/RikardJozwiak/status/1704910324435202133

գործողություններին: Զրուցակիցների կարծիքով դա կնպաստի ԵՄ-Հայաստան հարաբերությունների համար առավել կառուցողական միջավայրի ստեղծմանը:

Առաջարկ

- Հայաստանի հետ հարաբերությունների ամրապնդման ռազմավարական նպատակին հասնելու ճանապարհին հակասություններից խուսափելու համար ԵՄ-ն պետք է պայմաններ սահմանի Ադրբեջանի հետ իր տնտեսական հարաբերություններում: Պետք է պարզ լինի, որ Հայաստանի տարածքային ամբողջականության հետագա խախտումն առնվազն հետևանքներ է ունենալու ԵՄ հետ ինստիտուցիոնալ հարաբերությունների տեսանկյունից, ինչպես նաև ֆինանսական հետևանքներ՝ ադրբեջանական վերնախավի համար:

ԵՄ-Հայաստան հարաբերությունները ձևավորող տարածաշրջանային դինամիկայի վերաբերյալ պատկերացում

ԵՄ-Հայաստան հարաբերությունները տարածաշրջանային դինամիկայի ազդեցության տակ են և չեն կարող վերլուծության ենթարկվել առանձին:

Հայաստանի արտաքին քաղաքականության կողմնորոշումն ավանդաբար ձևավորվել է՝ ելնելով Ռուսաստանի հետ ռազմավարական դաշինքից: Տարածաշրջանային տերությունների և նրանց միջև այս բարդ քաղաքական և տնտեսական հարաբերությունները կարևոր դեր է խաղում ԵՄ-Հայաստան ընդհանուր հարաբերությունների ձևավորման գործընթացում: Միևնույն ժամանակ, Ադրբեջանի կառավարության հետ Եվրոպական միության համագործակցությունը ևս ազդեցություն է գործում ԵՄ-Հայաստան հարաբերությունների վրա:

ԵՄ տեսանկյունից Ռուսաստանի հետ Հայաստանի հարաբերությունները որոշակի ազդեցություն են ունենում ԵՄ-Հայաստան հարաբերությունների վրա:

Թե՛ հայ և թե՛ եվրոպացի շահագրգիռ կողմերի գերակշռող տեսակետն այն է, որ ԵՄ-Հայաստան հարաբերությունների ամրապնդումը ոչ թե միջոցառում է ընդդեմ Ռուսաստանի, այլ, ավելի շուտ, ռազմավարական քայլ է՝ ուղղված Հայաստանի դիմակայունության բարձրացմանը՝ ընդդեմ ադրբեջանական ագրեսիայի:

Հարցազրույցների մասնակիցներից շատերի կարծիքով Ռուսաստանի հետ Հայաստանի կապը ձևավորում է վերջինիս հարաբերությունները ԵՄ հետ: Դա հիմնված է Ռուսաստանից Հայաստանի էական կախվածության վրա, այդ թվում՝ անվտանգության, էներգետիկայի և ենթակառուցվածքների ոլորտներում: Ինչևէ, Հայաստանի և Ռուսաստանի շահերը միշտ չէ,

որ համընկնում են, հատկապես շարունակվող հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում: Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) և Ռուսաստանի անկարողությունը՝ կատարելու իրենց պարտավորություններն անվտանգության ոլորտում, և ՀԱՊԿ ոչ համարժեք արձագանքը 2022 թվականի սեպտեմբերին ադրբեջանական ագրեսիայի ժամանակ Հայաստանի օգնության խնդրանքին, ընդգծում են այդ խնդիրները: Տարածաշրջանային վերջին զարգացումները, ինչպես նաև Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության շրջանակներում իր գերիշխող ազդեցությունը երկու երկրների վրա պահպանելու նպատակով Ռուսաստանի մանևրները դրդել են Հայաստանին ավելի դիվերսիֆիկացնել իր արտաքին քաղաքականությունը:

2021 թվականին, երբ Եվրոպական միությունը միջնորդի դեր ստանձնեց Հայաստանի և Ադրբեջանի միջև դիվանագիտական բանակցություններում, Ռուսաստանն ի սկզբանե որևէ կերպ չընդդիմացավ: Այնուամենայնիվ, իրավիճակը փոխվեց՝ ստեղծելով «զրոյական արդյունքով խաղի» տպավորություն խաղաղության ձևաչափերի համար մրցակցող Մոսկվայի, Բրյուսելի և Վաշինգտոնի միջև: Զրուցակիցները նշել են, որ ԵՄ-ն ճնշում չի գործադրում Հայաստանի վրա Ռուսաստանի հետ դաշինքից դուրս գալու հարցում, ինչը հարաբերական է դարձնում Ռուսաստանի դերը ԵՄ-Հայաստան հարաբերությունների ձևավորման համատեքստում: Մյուսները պնդել են, որ մի քանի ԵՄ անդամ պետությունների և Ադրբեջանի միջև էներգետիկ կապն առավել էական ազդեցություն է թողնում ԵՄ-Հայաստան հարաբերությունների հետագծի վրա:

Աշխարհաքաղաքական բարդությունները հաղթահարելու համար Հայաստանը պետք է համաձայնեցնի իր արտաքին քաղաքականությունը դիվանագիտական բազմաթիվ գործընկերների հետ: Սա ենթադրում է Հայաստանի դիվանագիտական և տնտեսական հորիզոնների ընդլայնում նոր գործընկերային հարաբերությունների հաստատման միջոցով, այդ թվում՝ գլոբալ հարավի հետ: Հատկանշական է, որ Հայաստանը նոր դիվանագիտական երկխոսություն է սկսել, օրինակ, արաբական աշխարհի և Հնդկաստանի հետ, ինչպես նաև ակտիվացրել է արդեն իսկ եղածները, այդ թվում՝ Ֆրանսիայի, Հունաստանի և Կիպրոսի հետ[17]: Ամենակարևորն այն է, որ զրուցակիցներն առաջարկել են զգուշավոր հավասարակշռություն պահպանել Ռուսաստանի և ԵՄ-ի միջև՝ ընդգծելով ռազմավարական դիվերսիֆիկացման անհրաժեշտությունն առանց Արևելք-Արևմուտք հակամարտության մեջ ներքաշվելու: Այս հարաբերություններում հաջողված հավասարակշռության պահպանումը հնարավորություններ է ստեղծում զարգացման և համագործակցության համար: Սակայն, եթե Հայաստանն ստիպված լինի ընտրել Ռուսաստանի և ԵՄ-ի միջև, հայ ժողովուրդը կբախվի հեռուն գնացող հետևանքների:

[17] Բենիամին Պողոսյան, «Ինչո՞ւ է կարևոր Հայաստանի արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացումը» armenpress.am, 2023թ. դեկտեմբեր 8, https://armenpress.am/eng/news/1125848.htmlhttps://armenpress.am/eng/news/1125848.html

Հայաստանի տեսանկյունից՝ վերջինիս հետ հարաբերությունների ամրապնդման ԵՄ ռազմավարական նպատակը կասկածի տակ է դրվում Ադրբեջանի հետ ԵՄ հարաբերությունների պատճառով:

ԵՄ-Հայաստան հարաբերությունների դինամիկայի ընկալման հարցում գլխավոր դեր է խաղացել ԵՄ արձագանքն Ադրբեջանի սպառնալիքներին և Հայաստանի դեմ ուժի փաստացի կիրառմանը: Մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ Ադրբեջանի հետ ԵՄ հարաբերությունները և դիսկուրսը քննադատական վերագնահատում են պահանջում: ԵՄ-ի կողմից համարժեքության սկզբունք որդեգրած երկարամյա հռետորաբանությունը դե ֆակտո հանգեցրել է Ադրբեջանի անպատժելիության՝ հնարավորություն տալով նրան իրականացնել իր քաղաքական օրակարգն առանց էական հետևանքների:

Զրուցակիցներից ոմանք նշել են, որ Ադրբեջանն ամենայն հավանականությամբ ավելի շատ առավելություններ է ստացել ԵՄ միջնորդական դերից, որն իր գագաթնակետին հասավ 2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի անկմամբ՝ առանց Ադրբեջանի համար ԵՄ կողմից որևէ շոշափելի հետևանքների: Չնայած սեպտեմբերի 21-ին Գերագույն ներկայացուցչի հայտարարությանն այն մասին, որ «իրավիճակի հետագա վատթարացման դեպքում ԵՄ-ն պատրաստ է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ»,[18] որևէ գործողություն այդ պահից ի վեր չի իրականացվել՝ չնայած հաջորդ օրերին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած էթնիկ զտմանը:

Պրահայում (2022թ. հոկտեմբեր) Եվրոպական քաղաքական համայնքի առաջին գագաթնաժողովի շրջանակներում Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային ամբողջականության ճանաչումն Ադրբեջանի համար ճանապարհ բացեց Լեռնային Ղարաբաղի դե ֆակտո կառավարությունը և պաշտպանության բանակը լուծարելու համար: Այս առումով հարցազրույցների մասնակիցներից ոմանք ընդգծել են, որ ԵՄ-ի՝ Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի հայերի նկատմամբ Ադրբեջանի վարքագծին արդյունավետ կերպով չանդրադառնալը նպաստեց ներկա իրավիճակին: Այս անհամարժեքությունը, հատկապես Ուկրաինայի դեմ Ռուսաստանի պատերազմի հարցում ԵՄ լայն հրապարակային դիրքորոշման համատեքստում, հանգեցրել է հայ քաղաքացիական հասարակության հիասթափությանը, մարդկանց շրջանում շփոթության ավելացմանը, ինչը կարող է երկարաժամկետ հետևանքներ ունենալ Հայաստանում հակաեվրոպական տրամադրությունների համատեքստում: Ուստի, եթե Եվրոպական միությունը ձգտում է հարաբերություններ զարգացնել Հայաստանի հետ, մասնավորապես, ընդլայնել փոխգործակցությունը հայ հասարակության հետ, այն պետք է ցուցաբերի ինչպես քաղաքական կամք, այնպես էլ ձեռնարկի գործողություններ՝ օգնելու վերացնել Հայաստանի անվտանգության սպառնալիքները: Դա վճռական նշանակություն ունի ոչ միայն ԵՄ՝ որպես

[18] Արտաքին գործողությունների եվրոպական ծառայություն, «Ադրբեջան. Գերագույն ներկայացուցչի հայտարարությունը Լեռնային Ղարաբաղում զարգացումների վերաբերյալ», www.eeas.europa.eu (ԵՄ առաքելություն Հայաստանում, 2023թ. սեպտեմբերի 21), https://www.eeas.europa.eu/euma/azerbaijan-statement-high-representative-developments-nagorno-karabakh_en?s=410283

աշխարհաքաղաքական դերակատարի հավակնոտ դերի, այլև Հայաստանը որպես ինքնիշխան ժողովրդավարություն զարգացնելու իր շահագրգռվածության **տեսանկյունից:**

ԵՄ գնահատականը Հայաստանի բարդ հարևանությանը

ԵՄ որոշ շահագրգիռ կողմեր կիսվել են տարածաշրջանային մյուս ուժերի վերաբերյալ իրենց տեսակետով՝ գնահատելով Հայաստանի բարդ աշխարհագրությունը:

| **Թուրքիա.** ԵՄ-ն կողմ է Թուրքիայի և Հայաստանի հարաբերությունների կարգավորման գործընթացին: Չնայած Թուրքիայի և Ադրբեջանի տրամադրվածությանն ընդդեմ Հայաստանի՝ ԵՄ-ն սա դիտարկում է որպես հնարավորություն տարածաշրջանային համագործակցության հետագա զարգացման համար՝ չնայած հարաբերությունների կարգավորման հարցում Թուրքիայի պահանջատիրական դիրքորոշմանն ու Հայաստանը թուլացնելու նպատակով Ադրբեջանի հետ իր ռազմավարական միությանը:

| **Վրաստան.** Վրաստանին ԵՄ անդամ պետության թեկնածուի կարգավիճակ տրամադրելու ԵՄ ռազմավարական քայլը նպաստում է Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական լանդշաֆտի ընդլայնմանը: Քանի որ ԵՄ-ն աստիճանաբար ստանձնում է առավել նշանակալի աշխարհաքաղաքական դեր և երկարաժամկետ հեռանկարում կարող է ընդլայնել իր սահմանները դեպի Հարավային Կովկաս, Հայաստանի տարածքային ամբողջականության պահպանումը, որը կարող է գտնվել անմիջականորեն ԵՄ սահմանների մոտ, գնալով առավել արդիական է դառնում:

| **Իրան.** Ռուսաստանի հետ Իրանի համագործակցությունը Արևմուտքին դրդել է հավելյալ պատժամիջոցներ սահմանել՝ սրելով իրենց՝ առանց այն էլ լարված հարաբերությունները: Այնուամենայնիվ, զրուցակիցները խոստովանել են, որ Հայաստանը, ունենալով լարված հարաբերություններ իր չորս հարևաններից երկուսի հետ, դիտարկում է Իրանը՝ որպես կառուցողական գործընկեր:

Առաջարկներ

- Եվրոպական միությունը պետք է դրսևորի ինչպես քաղաքական կամք, այնպես էլ ձեռնարկի գործողություններ՝ օգնելու վերացնել Հայաստանի անվտանգության սպառնալիքները՝ հստակ դատապարտելով ուժի կիրառման սպառնալիքը կամ դրա կիրառումն ընդդեմ Հայաստանի և ապահովելով «Եվրոպական խաղաղության գործիքի» միջոցով Հայաստանի զինված ուժերին ոչ մահաբեր սպառազինությունների տրամադրման աջակցությունը:

- Հայաստանը պետք է ձգտի առավել սերտ կապեր հաստատել ԵՄ առանձին անդամ պետությունների, ինչպես նաև այլ, այդ թվում՝ գլոբալ հարավի երկրների հետ: Դա համապատասխանում է Հայաստանի դիվանագիտական և տնտեսական

պարտավորությունների դիվերսիֆիկացման ընդհանուր նպատակին՝ այդպիսով նպաստելով նրա ճկունությանը և միջազգային հարթակում ռազմավարական դիրքավորմանը:

ԵՄ-ին և Հայաստանին անհրաժեշտ է ռազմավարական տեսլական

Հայաստանը պատրաստ է «խորացնել հարաբերությունները ԵՄ հետ այնքան, որքան ԵՄ-ն հնարավոր է համարում»[19]: Այդուհանդերձ, սա պահանջում է ԵՄ հնարավորությունների և սահմանափակումների ու մտահոգությունների իրատեսական ըմբռնում: **Հայաստանի ակնկալիքները պետք է լինեն գործնական՝ Հայաստանի շահերին և Եվրամիության առաջնահերթություններին համապատասխանող համագործակցության ոլորտների ռազմավարական շեշտադրմամբ:** Հայ պաշտոնյաները հաճախ հղվում են «հայ ժողովրդի եվրոպական նկրտումներին»՝ փաստացի չմեկնաբանելով, թե ինչ է դա ենթադրում, և ինչ է Հայաստանը ուզում իր համար՝ առանց կողմնակի առաջնորդության:

Հարցազրույցների մասնակիցների կարծիքով, Եվրոպական միության փոխգործակցությունը Հայաստանի հետ պայմանավորված է ոչ թե երկրին օգնելու մեծ ցանկությամբ, այլ տարածաշրջանային անկայունության և զարգացող դինամիկայի պայմաններում ռազմավարական շահերով: Հետազոտությունից նաև միանգամայն ակնհայտ է դառնում, որ ԵՄ-ն չունի հետևողական արտաքին քաղաքականության համահունչ շրջանակ Հայաստանի և ընդհանուր Հարավային Կովկասի հետ համագործակցության համար: Կան ԵՄ-Հայաստան հարաբերությունները խոչընդոտող ևս մի քանի սահմանափակումներ.

- ընդհանուր սահմանի բացակայություն, ինչը կարող է փոխվել, եթե Վրաստանը դառնա ԵՄ անդամ պետություն,
- աշխարհաքաղաքական լարվածություն, որն ընդգծվում է Ադրբեջանի ագրեսիան պատժելու ԵՄ-ի դժկամությամբ,
- ԵՄ-Հայաստան հարաբերություններից Ռուսաստանի դժգոհություն, որը պահանջում է կոշտ հավասարակշռող միջոցառումներ,
- տնտեսական և լոգիստիկ մարտահրավերներ, որոնք բխում են եվրոպական և հայկական շուկաների միջև առկա անհավասարությունից:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ ԵՄ-Հայաստան հարաբերությունների ևս մեկ մարտահրավեր է հանդիսանում Հարավային Կովկասի հարցում ԵՄ ոչ միասնական

[19] Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, «ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի մամուլի համար հայտարարությունը և պատասխանները լրագրողների հարցերին Էստոնիայի ԱԳ նախարարի հետ համատեղ մամուլի ասուլիսին», www.mfa.am (Արտաքին գործերի նախարարություն, 2023թ. դեկտեմբերի 31), https://www.mfa.am/en/press-conference/2023/12/13/Mirzoyan_speech_/12419

արտաքին քաղաքական մոտեցումը: **Ամենայն հավանականությամբ, Եվրամիությունը Հարավային Կովկասում հետապնդում է նպատակներ, որոնք երբեմն հակասում են միմյանց, ինչն էլ հանգեցնում է ռեակտիվ մոտեցման[20]:** Այնպիսի արժեքներ խթանելու իր ջանքերում, ինչպիսիք են լավ կառավարումը, ժողովրդավարությունը և մարդու իրավունքները, և, միևնույն ժամանակ, նպաստելով կայունությանը, հակամարտությունների կարգավորմանն ու տնտեսության վերականգնմանը, ԵՄ-ն առանց ջանք խնայելու փորձում է հավասարակշռել հիմնարար սկզբունքներն ու ռազմավարական շահերը: Չնայած Եվրոպական հարևանության քաղաքականությունում և Արևելյան գործընկերությունում ամրագրված հստակ քաղաքական նպատակներին՝ կայունության մտահոգությունները, ռազմավարական շահերը և էներգետիկ նկատառումները գերակայում են: Կարճաժամկետ տնտեսական նախապատվությունները վեր դասելով հիմնարար քաղաքական առաջնահերթություններից՝ վտանգվում են ժողովրդավարական վարչակարգերի հետևողական աջակցության համատեքստում անվտանգության հնարավոր օգուտները[21]:

Զրուցակիցների մեծամասնությունը համաձայնել է, որ, թեպետ Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտությունը ներկայումս գոյաբանական սպառնալիք չի ներկայացնում ԵՄ անվտանգության համար, այն կարող է ունենալ խորը հետևանքներ հարավկովկասյան տարածաշրջանից դուրս: Մտավախություն կա, որ ավելի մեծ ռազմական ներուժ ունեցող ավտորիտար երկրները կարող են մոտիվացված լինել ուժ կիրառելավելի փոքր ժողովրդավար պետությունների նկատմամբ: Զրուցակիցներն ընդգծել են, որ ընթացիկ իրադարձությունները ռազմավարական հնարավորություն են Եվրամիության համար՝ ընդլայնելու իր տարածաշրջանային ներգրավվածությունը Հայաստանի հետ կապերի ամրապնդման և Վրաստանի՝ ԵՄ թեկնածության գործընթացի միջոցով: Որոշ զրուցակիցներ վստահություն են հայտնել, որ համագործակցությունը CEPA-ի շրջանակներում կբերի տնտեսական օգուտներ և կամրապնդի Հայաստանի անվտանգության ճարտարապետությունն ու կլուծի վերջինիս հումանիտար խնդիրները:

Հարցազրույցների բոլոր մասնակիցները խոստովանել են, որ Հայաստանը գտնվում է բարդ աշխարհաքաղաքական կացության մեջ՝ ընդգծելով երկրի՝ տարածաշրջանային տերությունների միջև կողմնորոշվելու և իր կախվածությունները դիվերսիֆիկացնելու անհրաժեշտությունը: Սա ենթադրում է կախվածությունների և փոխգործակցության հնարավորությունների ներուժի խոր ըմբռնում: ԵՄ-Հայաստան հարաբերությունների համատեքստում Հայաստանը պետք է մատնանշի ԵՄ աջակցության կարիքն ունեցող առաջնահերթ ոլորտները: Որոշ զրուցակիցներ ընդգծել են Եվրամիության աջակցության կարողությունների սահմանափակ բնույթը: Հետևաբար, էական փոփոխությունների հասնելու համար Հայաստանը պետք է սահմանի այն ոլորտները, որոնք առավելագույնս կշահեն ԵՄ ներգրավվածությունից: Հայաստանին առաջարկվել է իրատեսական մոտեցում

[20] Բոբ Դին, Վաուտեր Ցվերս և Կամիլա Լինդեր, «ԵՄ-ն Հարավային Կովկասում տեղաշարժվում է քաոսի աշխարհաքաղաքական լաբիրինթոսով», Կլինգենդել (Կլինգենդել, 2023թ. մարտ), https://www.clingendael.org/sites/default/files/2023-03/the-eu-in-the-south-caucasus.pdf, էջ 36:

[21] *Նույն տեղում*

որդեգրել, որում վճռական նշանակություն ունի ԵՄ սահմանափակումների ընդունումը, օրինակ՝ Ադրբեջանի և Թուրքիայի նկատմամբ առավել կոշտ դիրքորոշում ընդունելու հարցում իր սահմանափակումը: Հայաստանը կարող է պահանջել նպատակային ներդրումներ աջակցության անհրաժեշտություն ունեցող ռազմավարական ոլորտներում: Նման ներդրումները, հատկապես Հայաստանի բարձր տեխնոլոգիական արդյունաբերության մեջ, կարող են տնտեսական օգուտներ բերել՝ միաժամանակ բարձրացնելով երկրի ճկունությունն ու ռազմական հնարավորությունները կիբերսպառնալիքներ դիմակայելու համար:

Հայաստանի հետ ԵՄ փոխգործակցության ընդլայնումը և Հայաստանի ինքնիշխանության վրա նրա նոր շեշտադրումն ուշագրավ առաջընթաց են համարվում ԵՄ արտաքին քաղաքականությունում: ԵՄ-ն գնալով ավելի է գիտակցում Արևելքի և Արևմուտքի, ինչպես նաև Հյուսիսի և Հարավի խաչմերուկում ռազմավարական նշանակության տեղակայում ունեցող Հայաստանի ներուժը՝ փոխկապակցվածությունն ամրապնդելու տեսանկյունից: Զրուցակիցներն առաջարկել են, որպեսզի Հայաստանն օգտագործի այդ փաստն իր նշանակությունն ամրապնդելու համար և ընդգծի, որ տարածաշրջանային կայունությունը կենսական նշանակություն ունի ԵՄ հարևանությամբ: Զրուցակիցներից ոմանք առաջարկել են պահպանել ԵՄ հետ շարունակվող Track II երկխոսությունը: Այս առումով կարող է օգտագար լինել համակարգման ոլորտի բարելավումը Եվրամիության և առանձին անդամ պետությունների միջև, որոնք Հայաստանի հարցում արդեն իսկ ունեն հստակ շահեր և քաղաքական օրակարգ: Բացի այդ, ԵՄ-ն կարող է նպաստել Հայաստանի հետ իր անդամ պետությունների երկկողմ համագործակցությանը:

Եվրոպական միությունը և Հայաստանը պետք է գիտակցեն, որ պետք է անցնեն երկար ճանապարհ և միանգամայն աջակցեն հարաբերությունների զարգացող դինամիկային միմյանց ներկայացնելով համագործակցության հստակ տեսլական:

Ռազմավարության կիրառումը, որն օգտագործում է ինչպես խթաններ, այնպես էլ զսպող գործոններ՝ միաժամանակ երկու կողմերի համար սահմանելով հետագա համագործակցության հստակ տեսլական, կօգնի երկու կողմերին զարգացնել իրենց ապագա հարաբերությունները: Այս մոտեցումը պետք է հաշվի առնի այն մարտահրավերները, որոնք ստեղծում է ԵՄ քաղաքական մեքենան և 27 անդամներից կազմված բլոկում որոշումների ընդունման գործընթացը, ինչպես նաև Հայաստանի թույլ ինստիտուցիոնալ համակարգը:

Ի վերջո, ինչպես ընդգծում է հայկական կողմը, կարևոր է հասկանալ, որ Հայաստանի գործողությունները ռազմավարական կենտրոնացում են սեփական շահերի վրա: Հայաստանի ներկայիս առաջնահերթությունների առաջին տեղում իր պաշտպանական ներուժի ուժեղացումն է, և ԵՄ աջակցությունը վճռական նշանակություն ունի այս նպատակի իրացման համար: Թեպետ ԵՄ-ն կարող է և չառաջարկել ուղղակի ռազմական օգնություն, առևտրային ուղիներում իր ակտիվ տնտեսական մասնակցությունը, էներգետիկ

անվտանգության ոլորտում նախաձեռնությունները և ռազմավարական ներդրումները կարող են հնարավորություն տալ Հայաստանին կենսական նշանակության ներդրումներ կատարել իր անվտանգության համակարգում:

Առաջարկներ

- Եվրոպական միությունը պետք է հստակ սահմանի իր ռազմավարական և ամբողջական մոտեցումը Հարավային Կովկասի հարցում՝ հիմնված իր ռազմավարական քաղաքական առաջնահերթությունների, նորմատիվ արժեքների և երկարաժամկետ շահերի վրա: Վերջինս կարող է երկու հարթակ օգտագործել տարածաշրջանի արտաքին քաղաքական իր տեսլականի մասին տեղեկացնելու համար. Արևելյան գործընկերության խիստ անհրաժեշտ բարեփոխումներ և Track II երկխոսության աջակցության ավելացում:

- Եվրոպական միությունը պետք է սերտորեն համագործակցի անդամ պետությունների հետ, որոնք հստակ օրակարգ ունեն՝ կապված Հայաստանի հետ: Եվ հակառակը, ԵՄ-ն պետք է խրախուսի իր անդամ պետություններին Հայաստանի հետ երկկողմ հարաբերությունների հետագա ներգրավվածությունը:

- Հայաստանը պետք է ակտիվ դիրք որդեգրի ԵՄ հետ համագործակցության շրջանակներում, ոչ թե սպասի նոր հրահանգների: Անհրաժեշտ է, որպեսզի այն հստակ ձևակերպի ԵՄ հետ համագործակցության իր ակնկալիքներն ու առաջնահերթությունները:

- Հայաստանը պետք է հետևողականորեն ընդգծի իր ռազմավարական նշանակությունը և այն, թե ինչ կարող է ինքն առաջարկել ԵՄ-ին:

- Անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանը ռազմավարական տեսանկյունից սահմանի առաջնահերթ ոլորտները, որոնք առավելագույն օգուտ կստանան ԵՄ ներգրավվածությունից և ներդրումներ փնտրի այդ կոնկրետ ոլորտներում:

Առաջարկներ

Եվրոպական միությունը պետք է

- հստակ սահմանի իր ռազմավարական և ամբողջական մոտեցումը Հարավային Կովկասի հարցում՝ հիմնված իր ռազմավարական քաղաքական առաջնահերթությունների, նորմատիվ արժեքների և երկարաժամկետ շահերի վրա: Վերջինս կարող է երկու հարթակ օգտագործել տարածաշրջանի արտաքին քաղաքական իր տեսլականի մասին տեղեկացնելու համար. Արևելյան գործընկերության խիստ անհրաժեշտ բարեփոխումներ և Track II երկխոսության աջակցության ավելացում,
- սերտորեն համագործակցի անդամ պետությունների հետ, որոնք հստակ օրակարգ ունեն՝ կապված Հայաստանի հետ: Եվ հակառակը, ԵՄ-ն պետք է խրախուսի իր անդամ պետություններին Հայաստանի հետ երկկողմ հարաբերությունների հետագա ներգրավվածության համար,
- բարեփոխի Արևելյան գործընկերությունը՝ ռազմավարական ուշադրություն դարձնելով քաղաքացիական բարեփոխումներին, ներտարածաշրջանային կապերին և տրանսպորտին՝ բարձրացնելու գործընկեր երկրների կենսամակարդակը և նպաստելու խաղաղությանը փոխկապակցվածության ռազմավարական օգտագործման միջոցով,
- ակտիվորեն աջակցի տարածաշրջանային փոխկապակցվածության նախագծերին, այդ թվում՝ հետևի Սևծովյան էներգետիկ մալուխի նախագծին Հայաստանի մասնակցության ապահովմանը՝ օգնելու Հայաստանին դուրս գալ շրջափակումից,
- տեխնիկական օգնության և կարողությունների զարգացման միջոցով աջակցի Հայաստանին CEPA-ում ամրագրված քաղաքացիական բարեփոխումների իրականացման հարցում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կառավարումը, օրենքի գերակայությունը և դատական համակարգը,

- հետագա աջակցություն ցուցաբերի CEPA-ի շրջանակներում Հայաստանի տնտեսական բարեփոխումներին, հատկապես ԵՄ շուկայական չափանիշներին համապատասխանելու տեսանկյունից,
- Հայաստանի հետ հարաբերությունների ամրապնդման ռազմավարական նպատակին հասնելու ճանապարհին հակասություններից խուսափելու համար պայմաններ սահմանի Ադրբեջանի հետ իր տնտեսական հարաբերություններում: Պետք է պարզ լինի, որ Հայաստանի տարածքային ամբողջականության հետագա խախտումն առնվազն հետևանքներ է ունենալու ԵՄ հետ ինստիտուցիոնալ հարաբերությունների տեսանկյունից, ինչպես նաև ֆինանսական հետևանքներ՝ ադրբեջանական վերնախավի համար,
- դրսևորի ինչպես քաղաքական կամք, այնպես էլ ձեռնարկի գործողություններ՝ օգնելու վերացնել Հայաստանի անվտանգության սպառնալիքները՝ հստակ դատապարտելով ուժի կիրառման սպառնալիքը կամ դրա կիրառումն ընդդեմ Հայաստանի և ապահովելով «Եվրոպական խաղաղության գործիքի» միջոցով Հայաստանին ոչ մահաբեր սպառազինությունների տրամադրման աջակցությունը:

Հայաստանը պետք է

- հետևողականորեն ընդգծի իր ռազմավարական նշանակությունը և այն, թե ինչ կարող է ինքն առաջարկել ԵՄ-ին,
- ռազմավարական տեսանկյունից սահմանի առաջնահերթ ոլորտները, որոնք առավելագույն օգուտ կստանան ԵՄ ներգրավվածությունից և ներդրումներ փնտրի այդ հստակ ոլորտներում,
- ակտիվ դիրք որդեգրի ԵՄ հետ համագործակցության շրջանակներում, ոչ թե սպասի նոր հրահանգների: Անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանը հստակ ձևակերպի ԵՄ հետ համագործակցության իր ակնկալիքներն ու առաջնահերթությունները,
- ձգտի առավել սերտ կապեր հաստատել ԵՄ առանձին անդամ պետությունների, ինչպես նաև այլ, այդ թվում գլոբալ հարավի երկրների հետ՝ որպես իր ավելի լայն դիվերսիֆիկացման ռազմավարության մաս,
- բարձրացնի իր շուկայի մրցունակությունը և կառուցողական աջակցություն ցուցաբերի հայկական բիզնեսին ԵՄ շուկայի չափանիշներին համապատասխանելու նպատակով՝ անհրաժեշտ տեղեկատվությունը դարձնելով առավել հասանելի, հայկական արտադրանքի չափանիշները համապատասխանեցնելով ԵՄ նորմերին, ինչպես նաև ԵՄ որակի չափանիշներին համապատասխան նախաձեռնությունների մշակման և կյանքի կոչման հարցում ձևավորելով համագործակցություն կառավարության և մասնավոր հատվածի միջև,
- պարտավորվի արդյունավետ կերպով կյանքի կոչել բարեփոխումների օրակարգը համապատասխան պետական մարմինների կողմից իրականացման առավել հստակ պատասխանատվության և CEPA-ի շրջանակներում պետական կառավարման ընթացիկ բարեփոխումներին համապատասխան քաղաքացիական բարեփոխումների ավելի լավ ինտեգրման միջոցով,
- ընդլայնի իր փոխգործակցությունը տեղի քաղաքացիական հասարակության և հանրության հետ՝ ապահովելու այդ բարեփոխումների կայուն հաջողությունը:

ԱՊՐԻ Արմենիա

Հայաստանի կիրառական քաղաքականության հետազոտական ինստիտուտն (ԱՊՐԻ Արմենիա) անկախ վերլուծական կենտրոն և քաղաքական աքսելերատոր է, որը միտված է Հարավային Կովկասում տարածաշրջանային կայունությանը, կայուն բարգավաճմանը և քաղաքացիական ներգրավվածությանը: Մեր ծրագրերն ու նախաձեռնություններն ուղղված են հստակ խնդիրների, առանցքային մարտահրավերների լուծմանը Հայաստանի ներուժի կարճաժամկետ և երկարաժամկետ իրացման համար: Իր ռազմավարական հետազոտությունների և կազմակերպչական գործունեության միջոցով ԱՊՐԻ Արմենիան օժանդակում է մեր տարածաշրջանում դրական փոփոխություններին ուղղված բեկումնային գաղափարներին և բազմակողմ նախաձեռնություններին:

ԱՊՐԻ Արմենիան մեկնարկեց՝ ի պատասխան խորքային գիտելիքի և քաղաքականության ոլորտում դինամիկ երկխոսության անհրաժեշտության ու ներկայիս աշխարհաքաղաքական համատեքստում Հայաստանի դերի հստակ պատկերացման հրամայականի: Կազմակերպությունն իրականացնում է գործողությունների՝ ներուժի զարգացմանն ուղղված երկարաժամկետ նախաձեռնությունների և կարճաժամկետ ծրագրերի համադրությամբ: Մենք ստեղծում ենք միջավայր, որտեղ քաղաքականության կարևորագույն հարցերի շուրջ աշխատանքները տարվում են կառուցողական, համագործակցային և պրոֆեսիոնալ մթնոլորտում:

Հայաստանի կիրառական քաղաքականության հետազոտական ինստիտուտ
Մելիք Ադամյան փ. 2/2, Երևան, ՀՀ
connect@apri.institute
apri.institute

Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, Հարավային Կովկասի երևանյան գրասենյակ

Հայնրիխ Բյոլ հիմնադրամի (ՀԲՀ) երևանյան մասնաճյուղը ՀԲՀ Թբիլիսիի գրասենյակի մաս է (Հարավային Կովկասի տարածաշրջան): Գրասենյակի հիմնական նպատակն է նպաստել Հարավային Կովկասի ժողովրդավարացման գործընթացին: ՀԲՀ երևանյան գրասենյակը խթանում է գենդերային հավասարությունը, մարդու իրավունքները, սոցիալական և բնապահպանական արդարությունը:

ՀԲՀ երևանյան գրասենյակն իր գործընկերների հետ աջակցում է այնպիսի նախաձեռնություններին, որոնք ամրապնդում են Հայաստանում ժողովրդավարական քաղաքական մշակույթը և հարթակ են ստեղծում ժողովրդավարացման և քաղաքացիական հասարակության, գենդերային ժողովրդավարության և շրջակա միջավայրի փոխակերպման վերաբերյալ բանավեճի համար:

ՀԲՀ երևանյան գրասենյակը հարթակ է ապահովում երկխոսության և բազմակարծիք մոտեցումների համար հիշողության քաղաքականության, խորհրդային և հետխորհրդային պատմության շուրջ՝ այս թեմաները տեղափոխելով ավելի լայն հանրային քննարկման դաշտ:

Հայնրիխ Բյոլ հիմնադրամ, Երևան—Հարավային Կովկասի տարածաշրջան
Նալբանդյան 50, բն. 6, Երևան, Հայաստան
am-info@am.boell.org
www.ge.boell.org